ՎԵՐԱԴԱՐՁ Ի ՀԱՅՐԵՆԻՍ

(Թուրքմանոֆ-Ռիֆ-ն)

"Մանկական սրտովդ դու առ մեզ կուգաս,
"Եւ անմեղ հոգւովդ, իմ պանդուխտ տղաս"։
Ինձ կը շշնջէր՝ մէջէն անցնելիս՝
Անտառն բարձրաբերձ հայրենեաց երկրիս։
"Լի՞ է քո սիրտը առաջուայ սիրով
"Առ քո մերձաւորն՝ խիստ աղէզորով"
Այսպէս կը հնչէր հողմն հայրենեաց՝
Զայնակից դառած անտառին մայրեաց։
"Հաստատ մնացի՞ր քո այն սուրբ ուխտին՝
"Բարւոյն ծառայել մինչի ժամ վերջին։
"Եւ ազատութեան ճշմարիտ ծարաւ
"Երբի՞ր դու քո հետ՝ աստ դէպի հարաւ"։
Կարկաչէր այսպէս մայրենի զետակ,
Ցառաջ սողալով կոհակ առ կոհակ։
"Սիրտդ որդիական է՞ հաւատարիմ.
"Որոնց հեռուէն կ'երևի շիրիմ։
"Միտք բերի՞ր արդեօք բանն աւանդական,
"Որ ծնողք քեզ թողին մերձ ժամուն մահուան"։
Ցորդ արտասուքը բղխեց աչքերէս,
—Ո՜հ, իմ հայրենիք. հառաչեցի ես։
Ո՜չ, ձեր սուրբ կտակին չեմ եղել հաստատ,
Մանկական սիրտս չէ այժմ հարազատ։
Զը պահեցի ես միտք իմ անխարդախ,
Փշոտ ճամբէքիցս փախայ վախէ վախ։
Շեղուեցի նոյնպէս վեհ նպատակէն—
Իմ սիրուն յոյսեր՝ ո՞ւր են այժմ, ո՞ւր են։
Այլ ևս չկարեմ սրտալիր սիրել,
Ձեր վերջի խօսքը մոքիս չէ տիրել։
Անշահ, սնոտի, ընչին գործերից,
Ես զրաւուելով՝ զրկեցայ ուժից։
Հանգել է այժմ սրտիս վառ կայծը,
Ազատութեան ծարաւ և բարւոյ խայծը։
Կը դառնամ այժմ իմ մայրենի Հողը
"Անպտուղ . . ." — ահա՛ իմ սրտի դողը։
Ա՜խ, երբ կը նայեմ մեր տան հայրենի՝
Սիրտս ու հոգիս աղէխարշ կը լինի . . .
Երբ միտ կը բերեմ կորած ժամերս՝
Արտօսր զղջման կ'այրէ այտերս։

Պ. Հ. Ո. Գ. Ե. Ը.

ԲԱՐՈՑԱԿԱՆ

ԱՆԱՐԱԿ ՈՐԴԻՆ

(ՅԱ-ակոյն Ա-էպոբանի)

Ընչիւք հարուստ մեծատուն ոք, հայր էր երկուց զաւակաց,
Եւ լիսձեռն ընդոր տրիւք միշտ զպիտոյս աղքատաց.
Կրտսերագոյն որդի նորա բարուց դիպեալ ատելի,
Հայր, տուր՝ ասէր՝ որդւոյդ բաժին, զոր ինչ յընչեցդ անկանի։
Արտասուելի որդւոյն իւրոյ չնկաց երբեք նա անլուր,
Եւ հան բաժին արդարապէս զոր ինչ նմա անկանիւր.
Ընդեն աւուրք, մոլեգնութիւնքն որդւոյն չանցին զվայրկեան մի.
Զիւր ամենայն բարձեալ վերջոյ՝ չուեաց յաշխարհ 'ի հեռի։
Անդ զամենայն ցրուեաց, եկեր, զինչն վատնեաց հայրենի,
Մինչև նքթեալ սիրտն զեղոյր կարօտ աւուրն պարենի.
Դիմեալ զդուրս բաղխեր այլոց 'ի բաշխ հացին փշրանաց,
Սոքին հաւասար տիրեր երկրին, լսող չեղիս թախծանաց։

Չէ՛ք յոյս ունէք, տանել կալաւ խաղոյն անսուրբ զերամակ,
Եւ յեղջերաց ունել ժտէր յանպտղաբերն յագարակ.
Թշուառութիւնն հնարս պատեհ ծնանի 'ի սիրտ մահացուին
Անառակին լոյս խորհրդոց սիրտն կալաւ առանձին.

"Քանի՞ վարձկանք են յիմ հօր տան, ասէր, և անդ կերակրին
Ճոխք և փարթամք միանգամայն, այլ ես՝ ո՜հ, աստ կորնչիմ.
Դարձայց առ հայրն իմ ապաքէն, թախծով շիթս արտասուաց,
Ասացից, հա՛յր, մեղա՜յ յերկինս, առաջի քոյդ երախտեաց.

Ծնողիդ պղծած գոչել որդի, այժմ չեմ այլ արժանի,
Խնայեա՛, գթա՛ և ծառայիցդ գէթ զիս ընկա՛լ 'ի կարգի".
Ասաց, 'ի նոյն չոքաւ ժամուն դէմ՝ հայրենին յիւր յերկիր,
Ուր սիրտ ծնողին ջերմ անձկանօք որդւոյն վառէր սիրալիր.

Այն ինչ ետես հայրն բացուստ զորդին թէ գայ, գթացաւ,
Եւ ընդառաջ փաղփաղակի, այլք մեղացն ջնջեցաւ.
Փարեաց սիրով զպարանոցաւն. որդին գոչեաց յարտասուս,
"Մեղա՜յ յերկինս առաջի քոյ", և սիրտք զարթեան յալէլուս.

"Բերէք, ասէր, զիւր լուսափայլ պատմուճանըն և կօշիկ,
Եւ ագուցէք զմատանին, զի նոր հանդեան իմ լալիք.
Եւ զի գտի զիմ մոլորեալ և կորուսեալ այս զորդի,
Զեզն ածէք զպարարակ զենուլ սորա առաջի".

Հնչեցան ձայնք անդէն քնարաց, պար կազմեցաւ ընդ յարկաւ,
Այն ինչ երէցն քրտնաճակատ յագարակէն դարձեալ գայր.
Ոչ ինչ հեռի լուաւ գոչումն հրաւիրելոցն խառնաձայն,
Կոչեաց զմինն 'ի ծառայից՝ զխնել արդեօք զի՞նչ է այն.

Մատեաւ 'ի հարց, և բերկրութեամբ ծառայն անդէն պատասխան
Տալով, ասէր, "Եղբայր քո եկն, և ընկալաք մեք 'ի տան.
Բերկրալից հօրդ հրաման է այս՝ սեղան առնել մեծահաց,
Եւ մեզ այսօր լինել հաղորդ խրախ սրտին հրճուանաց".

Յայնժամ 'ի խորս սրտի նորա սուրբ մխեցան դառնութեան,
Եւ վէտ 'ի վէտ ծփայր հոգին յալիս ծովուն տրտմութեան.
Ո՛չ հանդուրժեաց, ասաց, կոչել զորդեսէր հայրն ծերունի,
Եւ ընդ նմա յոգնատխուր պարկեշտաձայն բարբառի.

"Յարդ ես հլու դոյդ կամացդ, ասէր, զուլ մի ոչ զենէր,
Ընդէ՞ր որդւոյդ անառակի զեզն պարար շնորհեցեր".
"Դու ցանկ ընդ իս և ես ընդ քեզ, հայրն կրկնեաց պատասխան,
Որդեա՛կ, ընդ գիւտ կորուսելոյն խնդալ անկ է և արժան".

Անառակին համգոյն և ես Տէր բարերար մարդասէր,
Ողորմութեանդ դիմեալ 'ի գութ առ քեզ գոչեմ մեղայ տէր.
Աղաչեմ տէր՝ քեզ 'ի հաճոյս ընկա՛լ զհառաչ իմ սրտի,
Եւ պարարակ եզինդ արեան արա՛ այսօր արժանի.

Զարեաք պատրեալ անհնազանդ գտայ Տեառնդ օրինին,
Զգեցո՛ ինձ, զոր կորուսի, զիմ պատմուճանն առաջին.
Անգէտ գոլով զքո զթոյդ տեղի ետու յայլ աշխարհ,
Ուր շահեցայ զսով սրբութեան՝ և սիրեցաց քոց աշխար.

Արդ սովամահ կորնչիմ Տէր, կենացդ զհաց մաղթեմ տուր,
Զի հացալից գտայց և ես իրրու զդրմանցս տրիտուր.
Ընկալ՝ ի տուն զիս հայրենի արքայութեանդ՝ ի խորան,
Ուր իմ երէց եղբայր հրեշտակք՝ կամացդ հրու կան ՁԵան.

Ամրացո՛, Տէր, զոտս իմ կոշկաք, իշխանութեամբն իմ Նախկին,
Զի առաթուր արկից յաւէտ զչարաթոյն թշնամին,
Որ զիս արագ խոզից պաշտպան արար մեղաց և մահու,
Եւ կողոպտեալ յինէն զինչ հօրդ տանջէր զհոգիս՝ ի սովու.

Սարգիս-աք Ա-ԷԳԷ Ա՝ԱԳ. ՓԻՆԱՃԵԱՆՑ։

ի Վ. Ս. Ստեփաննոսի։
ի ՀԻՆԳԻՆ Շ-Մ-Է-Յ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ԱՐԱՐԱՏ

ԿՐՕՆԱԿԱՆ ԱՄՍԱԳՐՈՑ

ՍՐԲՈՑ ԿԱԹՈՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ

Էջմիածնի ամնագրոյ երրորդ շրջանին տարեգլուխը մերձեցած լինելով, Խմբագրութիւնը կը փութայ յայտնել և միանգամայն խնդրել իւր Արդոյ բաժանորդներէն, որպէս զի օր յառաջ բարեհաճին ամէն Հայաբնակ քաղաքներուն Տպարանական Ժողովոյ կողմանէ նշանակուած Գործակալաց կանխիկ վճարել ՂԲՈ ռուբլի բաժանորդագինները իւրեանց Հասցէէն հէպ՝ ի միասին։

Այն ամնագրոյս սիրելի Ազգայնոց մէջ գտած համակրութիւնը և ընդունելութիւնը խրախուսած է՝ մանաւանդ պարտաւորած զԽմբագրութիւն նորին՝ մի և նոյն գնով (4 ռ.) բայց փոխանակ էջէ՝ ՂԲՈ թերթով և երբեմն (անցեալ տարուան պէս) յաւելուածով հրատարակել Ամնագիրը։

Անշուշտ ելք, որ մեր սիրելի Ազգայինք՝ Խմբագրութեան այսպիսի տնօրէնութենէն գոհ և ուրախ զգացմանց ենթարկուելով, յառաջակայում առաւել ևս համակրութեամբ և ընդունելութեամբ մեծարած Էրզրումը, նաև կրկին պիտի քաջալերէ Խմբագրութիւնը հետզհետէ ուրիշ կարևոր և օգտաւէտ փոփոխութիւնք յաւելացնելու։

Իսկ իւրաքանչիւր ամնագիրները՝ ի ժամանակին՝ բաժանորդաց փութով հասուցանելոյ աղագաւ՝ Տպարանական Ժողովոյ ձեռք առած միջոցաց և կարգած Գործակալաց շնորհիւ, կը յուսամք, զի այս առիթով պատահած դժգոհութեանց այլ ևս տեղիք մնալու չէ։ Գործակալաց անուանքը պէտք է շարունակ հրատարակուին Էրզրումոյ կողմի վերջին երեսում։

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՑ ԿԱԹՈՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ։